30 ապրիլի 2020 թվականի N 649 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 1506-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «Լույս» հիմնադրամից որպես նվիրատվություն գույք ընդունելու, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արտենիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ինչպես նաև «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը գույք նվիրելու մասին» N 1506-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԼՈՒՅՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԵՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-

ԹՅԱՆԸ, «ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը նվիրել «Արտենիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը և «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն NN 2, 3 և 4 հավելվածների:».

3) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

«4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի հետ համատեղ ապահովել սույն որոշումից բխող նվիրատվության պայմանագրի կնքման գործընթացն ու գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրանք իրականացնելով ընկերության միջոցների հաշվին:».

4) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ կետով.

«	12.	GE HEALCARE	ռենտգեն սարք	1	S/N 05886	160 000	160 000	».

5) որոշումը լրացնել նոր՝ N 4 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ.
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 649 - Ա որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2019 թվականի
հոկտեմբերի 31-ի N 1506- Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՓՈԽԱՆՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Սարքի անվանումը	Սարքի տեսակը	Քանակը	Գործարանային համարը	Հաշվեկշռային արժեքը (ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ)	Ընդամենը (ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ)
1.	GE HEALCARE	ռենտգեն սարք	1	S/N 05886	160 000	160 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ